


# Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻՋԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ  
Վարկային Կազմակերպություն փակ  
բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2020թ.



# Բովանդակություն

|  |    |
|--|----|
| Անկախ աուդիտորի եզրակացություն   | 3  |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն | 5  |
| Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն   | 6  |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն                         | 6  |
| Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն                                  | 8  |
| Ծանոթագրություն 1  | 10 |

## Անկախ աուդիտորի եզրակացություն

---

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**

ՀՀ, ք. Երևան 0015  
Երևան Պլազա  
Բիզնես Կենտրոն  
Գրիգոր Լուսավորիչ 9  
Հ. + 374 10 50 09 64/61

**Grant Thornton CJSC**

Yerevan Plaza Business Center  
9 Grigor Lusavorich street  
0015 Yerevan, Armenia  
Հ. + 374 10 50 09 64/61

«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը.

### Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը, քաղված են «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

### Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ-ներ), որոնք կիրառվել են Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

### Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021 թվականի հունիսի 25-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական

կարծիք:

*Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության  
պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով մեր կողմից «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության պատրաստման առաջադրանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ին (Վերանայված) համապատասխան իրականացրած ընթացակարգերի վրա:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն  
Առաջադրանքի պատասխանատու



25 հունիսի, 2021թ.

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

|  | 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2019թ. հոկտեմբերի 11-ից մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան |
|--|--|--|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                      | 60,414   | 1,643  |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                          | (27,696)   | (543)  |
| Զուտ տոկոսային եկամուտներ                            | 32,718   | 1,100  |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ            | 19,247   | 2,970  |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր                | (1,889)  | (561)  |
| Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ                       | 17,358   | 2,409  |
| Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ/(վնաս) | 2,940  | (34)   |
| Այլ եկամուտներ                                       | 885  | -  |
| Արժեզրկման ծախս                                      | (6,345)  | (2,776)  |
| Անձնակազմի գծով ծախսեր                               | (89,210)   | (9,397)  |
| Այլ ծախսեր   | (44,921)   | (7,613)  |
| Վնաս մինչև հարկումը                                  | (86,575)   | (16,311)   |
| Շահութահարկի գծով փոխհատուցում                       | 16,149   | 2,589  |
| Տարվա վնաս   | (70,426)   | (13,722)   |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք        | (70,426)   | (13,722)   |

# Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ   | 31 դեկտեմբերի<br>2020թ. | 31 դեկտեմբերի<br>2019թ. |
|---|-------------------------|-------------------------|
| <i>Ակտիվներ</i>                                       |                         |                         |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ                 | 52,542                  | 143,216                 |
| Հաճախորդներին տրված վարկեր                            | 95,176                  | 7,079                   |
| Ֆինանսական վաճակալության գծով դերհտորական պարտքեր     | 784,885                 | 94,152                  |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ             | 33,018                  | 14,851                  |
| Հետաձգված հարկային ակտիվ                              | 18,738                  | 2,589                   |
| Այլ ակտիվներ  | 68,898                  | 83,143                  |
| <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                             | <b>1,053,257</b>        | <b>345,030</b>          |
| <i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>           |                         |                         |
| <i>Պարտավորություններ</i>                             |                         |                         |
| Վարկեր և փոխառություններ                              | 682,128                 | 97,546                  |
| Այլ պարտավորություններ                                | 105,277                 | 11,206                  |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>                   | <b>787,405</b>          | <b>108,752</b>          |
| <i>Սեփական կապիտալ</i>                                |                         |                         |
| Բաժնետիրական կապիտալ                                  | 350,000                 | 250,000                 |
| Կուտակված վնաս  | (84,148)                | (13,722)                |
| <b>Ընդամենը՝ սեփական կապիտալ</b>                      | <b>265,852</b>          | <b>236,278</b>          |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ</b> | <b>1,053,257</b>        | <b>345,030</b>          |

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2021թ. հունիսի 25-ին՝

Արսեն Բազիկյան

Գլխավոր գործադիր տնօրեն

Վահագն Սարգսյան

Գլխավոր հաշվապահ



# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ  | Բաժնետիրական<br>կապիտալ | Կուտակված վնաս | Ընդամենը |
|--|-------------------------|----------------|----------|
| Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ               | 250,000                 | (13,722)       | 236,278  |
| Բաժնետիրական կապիտալի թողարկում                        | 100,000                 | -              | 100,000  |
| Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ                 | 100,000                 | -              | 100,000  |
| Տարվա վնաս   | -                       | (70,426)       | (70,426) |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք          | -                       | (70,426)       | (70,426) |
| Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ            | 350,000                 | (84,148)       | 265,852  |
| Հաշվեկշիռը 2019թ. հոկտեմբերի 11-ի դրությամբ            | -                       | -              | -        |
| Բաժնետիրական կապիտալի թողարկում                        | 250,000                 | -              | 250,000  |
| Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ                 | 250,000                 | -              | 250,000  |
| Ժամանակաշրջանի վնաս                                    | -                       | (13,722)       | (13,722) |
| Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք | -                       | (13,722)       | (13,722) |
| Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ            | 250,000                 | (13,722)       | 236,278  |

# Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

|  | 2020թ. հունվարի 1-ից<br>մինչև 2020թ. դեկտեմբերի<br>31-ին<br>ավարտված տարի | 2019թ. հոկտեմբերի 11-ից<br>մինչև 2019թ. դեկտեմբերի<br>31-ին ավարտված<br>ժամանակաշրջան |
|--|---|---|
| <i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>   |   |   |
| Վնաս մինչև հարկումը  | (86,575)  | (16,311)  |
| <i>Ճշգրտումներ</i>   |   |   |
| Մաշվածության մասհանումներ  | 6,117   | 441   |
| Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս   | 6,345   | 2,776   |
| Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային փոխարկումից զուտ օգուտ                       | (3,851)   | (99)  |
| Ստացվելիք տոկոսներ   | (3,176)   | (242)   |
| Վճարվելիք տոկոսներ   | 2,782   | 282   |
| Այլ կուտակված ծախսեր   | 5,699   | 737   |
| <i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</i> | <u>(72,659)</u>   | <u>(12,416)</u>   |
| <i>Նվազում գործառնական ակտիվներում</i>   |   |   |
| Հաճախորդներին տրված վարկեր   | (85,075)  | (7,098)   |
| Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր   | (652,627)   | (95,103)  |
| Այլ ակտիվներ   | 63,521  | (83,185)  |
| <i>Ավելացում գործառնական պարտավորություններում</i>   |   |   |
| Այլ պարտավորություններ   | 43,143  | 2,906   |
| Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը           | <u>(703,697)</u>  | <u>(194,896)</u>  |
| Վճարված շահութահարկ  | -   | -   |
| Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ                                      | <u>(703,697)</u>  | <u>(194,896)</u>  |
| <i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>  |   |   |
| Հիմնական միջոցների առք   | (18,344)  | (7,760)   |
| Ոչ նյութական ակտիվների առք   | (5,940)   | -   |
| Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ                                     | <u>(24,284)</u>   | <u>(7,760)</u>  |



# Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

2020թ. հունվարի 1-ից  
մինչև 2020թ.  
դեկտեմբերի 31-ին  
ավարտված տարի

2019թ. հոկտեմբերի 11-ից  
մինչև 2019թ. դեկտեմբերի  
31-ին ավարտված  
ժամանակաշրջան

## Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր

|   |           |         |
|---|-----------|---------|
| Բաժնետիրական կապիտալի թողարկում   | 100,000   | 250,000 |
| Ստացված վարկեր և փոխառություններ  | 1,004,566 | 102,186 |
| Վարկերի և փոխառությունների մարում   | (466,721) | (6,255) |
| Վարձակալության գծով<br>պարտավորությունների մարում                                     | (1,300)   | (100)   |
| Ֆինանսավորման գործունեությունից<br>ստացված զուտ դրամական միջոցներ                     | 636,545   | 345,831 |
| Դրամական միջոցների և դրանց<br>համարժեքների զուտ աճ/(նվազում)                          | (91,436)  | 143,175 |
| Դրամական միջոցներ և դրանց<br>համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի<br>դրությամբ            | 143,216   | -       |
| Արտարժույթի փոխարկման<br>ազդեցությունը դրամական միջոցների և<br>դրանց համարժեքների վրա | 762       | 41      |
| Դրամական միջոցներ և դրանց<br>համարժեքներ ժամանակաշրջանի վերջի<br>դրությամբ            | 52,542    | 143,216 |

## Լրացուցիչ տեղեկատվություն՝

|                  |          |       |
|------------------|----------|-------|
| Ստացված տոկոսներ | 57,238   | 1,401 |
| Վճարված տոկոսներ | (24,914) | (261) |

# Ծանոթագրություն 1

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը և կից ծանոթագրությունը՝ քաղված «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից, պատրաստված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ամբողջական ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը՝ կից ծանոթագրություններով, հասանելի է «ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության ինտերնետային կայքում՝ [www.armleasing.am](http://www.armleasing.am):